2021-2022 ուստարվա Աբովյանի կրթահամալիրի

7-րդ Բ դասարանի դասղեկի տարեկան հաշվետվություն

7-րդ Բ դասարանը բաղկացած է 24 աշակերտից: Աշակերտները ունեն բավարար ընդունակություններ, դասարանում սովորում են 2 ԿԱՊԿՈԻ աշակերտ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանում ունենք աշակերտներ, ովքեր միակողմանի ծնողազուրկ են,սովորում են նաև բազմազավակ ընտաիքի երեխաներ: Այդ ընտանիքներին ցուցաբերվել է աջակցություն և տրամադրվել են անվճար և զեղչված դասագրքեր:

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների մեջ նախատեսված աշխատանքները կատարվել են պատշաճ կերպով:

Ամբողջ տարվա ընթացքում, ուշադրության կենտրոնում եմ պահել աշակերտների վարքը, առաջադիմությունը , կապ եմ պահել ծնողների հետ ,քննարկել ենք խնդրահարույց հարցեր:

Տարվա ընթացքում հրավիրել եմ 2 ծնողական ժողով, մասնակցել են ծնողների մեծ մասը, իսկ մյուսները `աշխատանքի լինելու պատճառով այցելել են դպրոց յուրաքանչյուր ամսվա վերջում կազմակերպվող ծնող-ուսուցիչ հանդիպման ժամանակ:

Ծնողների հետ քննարկել ենք տարաբնույթ հարցեր, փորձել ենք գտնել ընդհանուր եզրույթներ, կազմակերպել փոքրիկ էքսկուրսիաներ և այլ հուզող հարցեր / բացակայություն,կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցային փոխօգնություն, հանդուրժողականություն/:

Աշակերտների հետ զրույցների ժամանակ մեծ ուշադրություն եմ դարձրել գեղագիտական, հոգևոր, ֆիզիկական,մտավոր, աշխատանքային, բնապահպանական դաստիարակչական թեմաներին, ունեցել ենք բուռն քննարկումներ:

Գեղագիտական դաստիարակության մասին խոսելիս ունեցել եմ տղաների և աղջիկներ հետ առանձին զրույցներ , խոսել ենք իրենց արտաքին տեսքի՝ սանրվածք, հագուս, աքսեսուարներ, հիգիենա և այլ թեմաների մասին:

Հքգևորի մասին խոսելիս մեծ ուշադրություն եմ դարձրել այնպիսի թեմաներին ինչպիսիք են՝ սեր, հարգանք միմյանց նկատմամբ, հանդուրժողականություն, պատասխանատվություն , հոգատարություն և այլն:

Ֆիզիկական դաստիարակության մեջ շեշտը դրել ենք մարմնի կառուցվածքի, ճկունության, ճիշտ սնման վրա:

Աշխատանքի կարևորության մասին խոսել ենք գրեթ ամեն դասաժամից հետո ՝ փորձելով աշակերտներին կենտրոնացնենք ցանկացած մանր թվացող , բայց կարևոր աշխատանքի վրա/ գրատախտակ մաքրել, նստարանները ուղղել, հատակից վերցնել մեծ թղթի կտորները, մաքրել և վերանորոգել աղտոտված կամ թեթև վնասված գույքը և այլն;

Կարևոր նշանակություն եմ տվել Բնապահպանական դաստիարակությանը, Սեփական օրինակով ցույց եմ տվել, թե ինչպես պետք է սիրել ու պահպանել մայր բնություն, մաքրել, չաղտոտել :

Ուսումնական տարվա սկզբին կազմել եմ աշակերտների անվանացանկը, ճշտել եմ աշակերտների սոցիալական վիճակը, կազմել եմ օգնության կարիք ունեցող աշակերտներիի ցուցակը, այլ

ուսումնական հաստատություն հաճախող աշակերտների ցանկը, բոլոր աշակերտներին ապահովել եմ դասագրքերով:

Ամենօրյա ասխատանք

- Հետևել եմ աշակերտների բացակայություններին
- Ուշադրություն եմ դարձրեկլ կարգապահությանը
- Զրուցել եմ այն աշակերտների հետ, ովքեր դասին ճիշտ չեն դրսևորել
- Ստուգել եմ դասագրքերի և տնային աշխատանքների առկայությանը և տեղեկացրել եմ ծնողներին
- Հետևել եմ ,որ դասապրոցեսին հեռախոսներ չօգտագործեն

Ամենամսյա աշխատանք

- Կազմակերպել ենք քննարկումներ առաջացած տարաձայնությունները հարթելու համար
- Խոսել ենք պարտականությունների և իրավունքների մասին
- Ուշադրություն ենք դարձրել ամսվա հոբելարներին
- Քննարկել ենք վարքը և առաջադիմությունները
- Հետևել ենք գույքի և դասասենյակի խնամքին

Տարեկան աշխատանք

Տարվա ընթացքում կազմակերպվող միջոցառումներին ցուցաբերել եմ աջակցություն, կազմակերպել եմ կինոդիտում, զբոսանք, զանազան քննարկումներ, մասնակցել ենք շաբաթօրյակի, կազմակերպել եմ տարեվերջյան էքսկուրսիա:

Դասղեկ՝ /Ա, Աբրահամյան/